ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ
ՇԻՐԱԿԻ ՄԱՐԶԻ ՋՐԱՌԱՏԻ ԳՅՈՒՂԱԿԱՆ ՀԱՄԱՅՆՔ ՂԵԿԱՎԱՐ

ՀՀ Շիրակի մարզ գյուղ Ջրառատ
Հեռ. ((093) 70-40-77

<< 07 >> Նոյեմբեր 2016թ.

N -107

ՀՀ Շիրակի մարզպետ
պարոն Հ. Սիմոնյան

Հարգարժան մարզպետ.

Ձեզ ենք ներկայացնում Ջրառատ համայնքի ավագանու 2016 թվականի հոկտեմբերի 26-ի յոթերորդ նիստի թիվ 20-Ն , թիվ 21-Ն որոշումները : Առդիր 11 թերթ:

Հարգանքով՝

Ահ. Ոսկանյան

ՇԻՐԱԿԻ ՄԱՐԶՊԵՏԱՐԱՆ
ԸՆԴՀԱՆՈՒՐ ԲԱԺԻՆ
Մուտք թիվ 11149-16
07 11 2016 թ.

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆ
ՇԻՐԱԿԻ ՄԱՐԶԻ
ԶՐԱՌԱՏ ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆՈՒ
ՈՐՈՇՈՒՄ ԹԻՎ 20-Ն

26 հոկտեմբերի 2016 թվական գյուղ Զրառատ

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՇԻՐԱԿԻ ՄԱՐԶԻ ԶՐԱՌԱՏ ՀԱՄԱՅՆՔԻ 2015 ԹՎԱԿԱՆԻ ԴԵԿՏԵՄԲԵՐԻ 17-Ի ԹԻՎ 19-Ն ՈՐՈՇՄԱՆ ՄԵՋ ՓՈՓՈԽՈՒԹՅՈՒՆՆԵՐ ԿԱՏԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով <<Տեղական ինքնակառավարման մասին>>Հայաստանի Հանրապետության օրենքի 16-րդ հոդվածի 1-ին մասի 3-րդ կետի, <<Իրավական ակտերի մասին>> Հայաստանի Հանրապետության օրենքի 70-րդ հոդվածի 2-րդ մասի 1-ին կետի, 5-րդ մասի դրույթներով և հիմք ընդունելով համայնքի ղեկավարի առաջարկությունը

Համայնքի ավագանին որոշում է

Հայաստանի Հանրապետության Շիրակի մարզի Զրառատ համայնքի ավագանու 2015 թվականի դեկտեմբերի 17-ի <<Հայաստանի Հանրապետության Շիրակի մարզի Զրառատ համայնքի 2016 թվականի բյուջեի հաստատելու մասին >> թիվ 19–Ն որոշման մեջ կատարել հետևյալ փոփոխությունները
1.Ընդամենը եկամուտներ տողի <<32528.4 հազար դրամ>> թիվը փոխարինել <<29828.4 հազար դրամ>> թվով, այդ թվում
1)<<Օրենքով և իրավական այլ ակտերով սահմանված համայնքի բյուջեի մուտքագրման ենթակա այլ եկամուտներ>> տողի <<3376,0 հազար դրամ>> թիվը փոխարինել <<676.0 հազար դրամ >> թվով:
2.Ընդամենը ծախսեր տողի <<44377.1 հազար դրամ>> թիվը փոխարինել << 41677.1 հազար դրամ>> թվով, այդ թվում
1)վարչական մասի <<32602.8 հազար դրամ>> թիվը փոխարինել <<29902,8 հազար դրամ>> թվով:
3.Ծախսային մասի .բաժին 11 խումբ 1 դաս 1 <<Հայաստանի Հանրապետության համայնքների պահուստային ֆոնդ>> ծրագրի <<Պահուստային միջոցներ>> հոդված 4891 <<4983.4 հազար դրամ>> թիվը փոխարինել <<852.0 հազար դրամ>>թվով, այդ թվում
4.<<Հայաստանի Հանրապետության համայնքների պահուստային ֆոնդ>> ծրագրի առանձին հոդվածների, որից
1)<<Այլ նպաստներ բյուջեից>> 4729 հոդվածի <<500,0 հազար դրամ >> թիվը փոխարինել <<1074,4 հազար դրամ>> թվով, որից 374,4 հազար դրամ կտրամադրվի Հայաստանի Հանրապետության Շիրակի մարզի <<Զրառատի միջնակարգ դպրոց» պետական ոչ առևտրային կազմակերպության աշակերտներին 2016-2017 թվականների ուսումնական տարվա դասագրքերի վարձավճարների մուծման համար, 200.0 հազար դրամ համայնքի սոցիալապես անապահով ընտանիքներին միանվագ նպաստ հատկացնելու համար:

2)<<Այլ կապիտալ դրամաշնորհներ>> հոդված 4657 <<0>> թիվը փոխարինել <<857.0 հազար դրամ>> թվով և բառով, համայնքում ԻՖԱԴԻ ծրագրով կառուցվող ջրագծի և ջրահավաք ավազանի կառուցման աշխատանքներին որպես համայնքային ներդրում կատարելու համար:

3)Բաժին 1 խումբ 6 դաս 1 «Ընդհանուր բնույթի հանրային ծառայություններ» այլ դասերին չպատկանող ծրագրի «Շենքերի և կառույցների ընթացիկ նորոգում և պահպանում» հոդված 4251 «40,0 հազար դրամ» թիվը փոխարինել «0» թվով,

4)«Մասնագիտական ծառայություններ» հոդված 4241 «210,0 հազար դրամ» թիվը փոխարինել «250,0 հազար դրամ» թվով:

Կողմ-3 Դեմ-0 Ձեռնպահ-0

Անդրանիկ Ոսկանյան

Արթուր Իսրաելյան

Միսակ Գալոյան

Ջրառատի համայնքի ղեկավար

Ահարոն Ոսկանյան

<<26>> հոկտեմբերի 2016 թվական

գյուղ Ջրառատ

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ
ՇԻՐԱԿԻ ՄԱՐԶԻ ԶՐԱՌԱՏԻ ԳՅՈՒՂԱԿԱՆ ՀԱՄԱՅՆՔ ԱՎԱԳԱՆՈՒ
ՈՐՈՇՈՒՄ N 21-Ն

<< 26>> հոկտեմբերի 2016 թվական գյուղ Զրառատ

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՇԻՐԱԿԻ ՄԱՐԶԻ ԶՐԱՌԱՏԻ ՀԱՄԱՅՆՔԻ ՍԵՓԱԿԱՆՈՒԹՅՈՒՆԸ ՀԱՄԱՐՎՈՂ ԹՎՈՎ 5 ԱՆՎԱՆՈՒՄ ԳՈՒՅՔԸ ԱՃՈՒՐԴՈՎ ՕՏԱՐԵԼՈՒ, ՕՏԱՐՄԱՆ ՄԵԿՆԱՐԿԱՅԻՆ ԳԻՆ ՈՒ ՊԱՅՄԱՆՆԵՐԸ ՀԱՍՏԱՏԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով <<Տեղական ինքնակառավարման մասին>> Հայաստանի Հանրապետության օրենքի 16-րդ հոդվածի 1-ին մասի 20-րդ կետի և <<Հրապարակային սակարկությունների մասին>> Հայաստանի Հանրապետության օրենքի 2-րդ, 5-րդ, 8-րդ հոդվածների դրույթներով, հիմք ընդունելով <<Պ. Ա. Գ.>> սահմանափակ պատասխանատվության ընկերության 2016 թվականի 2016 թվականի հոկտեմբերի 15-ի թիվ 121-6 գնահատման եզրակացությունը՝ Զրառատի համայնքի սեփականությունը համարվող թվով 5 անվանում գույքի շուկայական արժեքի վերաբերյալ, Հայաստանի Հանրապետության Շիրակի մարզի Զրառատի համայնքի ավագանին

Որոշում է

1. Համայնքի ղեկավարի առաջարկությամբ Հայաստանի Հանրապետության Շիրակի մարզի Զրառատի համայնքի սեփականությունը համարվող սույն որոշման N 1 հավելվածում նշված թվով 5 անվանում գույքը, /հետագայում՝ գույք/ օտարել աճուրդով:

2. Հաստատել օտարվող գույքի մեկնարկային գինը համաձայն N 1 հավելվածի:

3.Հաստատել աճուրդի կանոնակարգը և աճուրդի մասին հրապարակային ծանուցման հայտարարությունը համաձայն N 2 և N 3 հավելվածների:

4.Աճուրդը կազմակերպելու նպատակով՝ ստեղծել աճուրդային հանձնաժողով հետևյալ անհատական կազմով՝

հանձնաժողովի նախագահ՝

Ահարոն Ոսկանյան – Զրառատի համայնքի ղեկավար,

հանձնաժողովի անդամներ՝

Կարինե Մարգարյան - Զրառատի գյուղապետարանի աշխատակազմի առաջատար մասնագետ-հաշվապահ,

Մանյա Կարապետյան – Զրառատի գյուղապետարանի աշխատակազմի հարկային գործակալ,

Արթուր Իսրայելյան - Զրառատի համայնքի ավագանու անդամ,

Անդրանիկ Մանուկյան - Զրառատի համայնքի բնակիչ

5.<<Հրապարակային սակարկությունների մասին>> Հայաստանի Հանրապետության օրենքի 2-րդ հոդվածի 5-րդ մասի համաձայն գույքի աճուրդը կազմակերպելու նպատակով ստեղծված աճուրդային հանձնաժողովին օժտել հրապարակային սակարկություն կազմակերպելու լիազորություններով /հետագայում՝ աճուրդի կազմակերպիչ/:

ՀԱՄԱՅՆՔԻ ԱԿԱԳԱՆՈՒ ԱՆԴԱՄՆԵՐ՝

Կողմ՝ 3 Դեմ՝ 0 Չեռնպահ՝ 0

ԱՆԴՐԱՆԻԿ ՈՍԿԱՆՅԱՆ ----------

ԱՐԹՈՒՐ ԻՍՐԱՅԵԼՅԱՆ՝ ----------

ՄԻՍԱԿ ԳԱԼՈՅԱՆ՝ ----------

ԶՐԱՌԱՏԻ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ

ԱՀԱՐՈՆ ՈՍԿԱՆՅԱՆ

<< 26 >> հոկտեբերի 2016 թվական
գյուղ Զրառատ

ՀԱՎԵԼՎԱԾ ԹԻՎ 1
Հայաստանի Հանրապետության Շիրակի
մարզի Ձրառատի համայնքի ավագանու
2016 թվականի հոկտեմբերի 26-ի թիվ 21-Ն որոշման

Ց Ա Ն Կ

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՇԻՐԱԿԻ ՄԱՐԶԻ ՁՐԱՌԱՏԻ ՀԱՄԱՅՆՔԻ ՍԵՓԱԿԱՆՈՒԹՅՈՒՆԸ ՀԱՄԱՐՎՈՂ ԱՃՈՒՐԴՈՎ ՕՏԱՐՎՈՂ ԳՈՒՅՔԻ

Ղ/հ	Գույքի անվանումը	Գնահատման-եզրակացության ամսաթիվը համարը	Տեխնիկական վիճակի նկարագրությունը	Քանակը *հատ*	Մեկնարկային գինը / դրամ/
01	02	03	04	05	06
1	Ծածկի կողավոր սալեր	15.10.2016թ թիվ-121-6	Կոտրված , հիմնական ծածկող մակերևույթը քայքայված , կողավոր հատվածներում նկատվում են ընդլայնական ճաքեր , բացակայող մետաղական ամրաններ , ըստ նպատակային նշանակությամբ հետագա օգտագործման համար ոչ պիտանի ,	1	1000
2	Երկաթ-բետոնյա հենասյուներ անկյունային	15.10.2016թ թիվ-121-6	Կոտրված, կորդ հատվածների վրա բետոնի քայքայված տեղամասերով , երկարության վրա ընդլայնական խոր ճաքեր բետոնի վրա , վերջնամասերում կոտրված և զոդմամբ կտրված տեղամասերով , բացակայող մետաղական ամրաններ , ըստ նպատակային նշանակությամբ հետագա օգտագործման համար ոչ պիտանի , պարագծի երակարությունը 7-10 մետր ,	1	21000
3	Բետոնյա պատի սալեր	15.10.2016թ թիվ-121-6	Կոտրված , հիմնական ծածկող մակերևույթը քայքայված , նկատվում են ընդլայնական ճաքեր , բացակայող մետաղական ամրաններ ըստ նպատակային նշնակությամբ հետագա օգտագործման համար ոչ պիտանի	1	1000
4	Երկաթ-բետոնյա ռիգելներ	15.10.2016թ թիվ-121-6	Կոտրված մակերևույթը քայքայված , կողավոր հատվածներում նկատվում են ընդլայնական ճաքեր մետաղական ամրաններ հիմնականում բացակայում են ըստ նպատակային նշանակությամբ հետագա օգտագործման համար ոչ պիտանի	1	1200
5	Երկաթ-բետոնյա հիմքի կոճղեր	15.10.2016թ թիվ-121-6	Կողային մակերևույթը քայքայված թասանման կցման հատվածները կոտրված , ըստ նպատակային նշանակությամբ հետագա օգտագործման համար ոչ պիտանի	1	4000

ՁՐԱՌԱՏԻ ՀԱՄԱՅՆՔԻ
ՂԵԿԱՎԱՐ ԱՀԱՐՈՆ ՈՍԿԱՆՅԱՆ

ՀԱՎԵԼՎԱԾ ԹԻՎ 2
Հայաստանի Հանրապետության
Շիրակի մարզի Ձրառատի համայնքի ավագանու
2016 թվականի հոկտեմբերի 26-ի թիվ 21-Ն որոշման

ԿԱՆՈՆԱԿԱՐԳ

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՇԻՐԱԿԻ ՄԱՐԶԻ ՁՐԱՌԱՏԻ ՀԱՄԱՅՆՔԻ ՍԵՓԱԿԱՆՈՒԹՅՈՒՆԸ ՀԱՄԱՐՎՈՂ 5 ԱՆՎԱՆՈՒՄ ԳՈՒՅՔԻ ԱՃՈՒՐԴՈՎ ՕՏԱՐՄԱՆ ԱՃՈՒՐԴԱՅԻՆ ՀԱՆՁՆԱԺՈՂՈՎԻ /ԱՃՈՒՐԴԻ ԿԱԶՄԱԿԵՐՊԻՉ/ ԳՈՐԾՈՒՆԵՈՒԹՅԱՆ

Ի. ԸՆԴՀԱՆՈՒՐ ԴՐՈՒՅԹՆԵՐ

1.Սույն կանոնակարգը սահմանում է Հայաստանի Հանրապետության Շիրակի մարզի Ձրառատի համայնքի սեփականությունը համարվող թվով 5 անվանում շարժական գույքի աճուրդի կազմակերպման միջոցով օտարման աճուրդային հանձնաժողովի /աճուրդի կազմակերպիչ/ գործունեության կանոնները:

2.Աճուրդի կազմակերպիչ է հանդիսանում Հայաստանի Հանրապետության Շիրակի մարզի Ձրառատի համայնքի տեղական ինքնակառավարման մարմինները՝ ի դեմս համայնքի ավագանու 2016 թվականի հոկտեմբերի 26-ի <<Հայաստանի Հանրապետության Շիրակի մարզի Ձրառատի համայնքի սեփականությունը համարվող թվով 5 անվանում գույքը աճուրդով օտարելու, օտարման մեկնարկային գինն ու պայմանները հաստատելու մասին>> թիվ 21-Ն որոշմամբ ստեղծված աճուրդային հանձնաժողովը /աճուրդի կազմակերպիչ/՝ հետևյալ անհատական կազմով՝

հանձնաժողովի նախագահ՝

Ահարոն Ոսկանյան – Ձրառատի համայնքի ղեկավար ,

հանձնաժողովի անդամներ՝

Կարինե Մարգարյան - Ձրառատի գյուղապետարանի աշխատակազմի առաջատար մասնագետ-հաշվապահ,

Մանյա Կարապետյան – Ձրառատի գյուղապետարանի աշխատակազմի հարկային գործակալ,

Արթուր Իսրայելյան - Ձրառատի համայնքի ավագանու անդամ,

Անդրանիկ Մանուկյան - Ձրառատի համայնքի անդամ /համաձայնությամբ/:

3.Աճուրդի կազմակերպիչը ղեկավարվում է <<Հրապարակային սակարկությունների մասին>> Հայաստանի Հանրապետության օրենքով, Հայաստանի Հանրապետության Շիրակի մարզի Ձրառատի համայնքի ավագանու 2016 թվականի հոկտեմբերի 26-ի <<Հայաստանի Հանրապետության Շիրակի մարզի Ձրառատի համայնքի սեփականությունը հանդիսացող թվով 5 անվանում գույքը աճուրդով օտարելու, օտարման մեկնարկային գինն ու պայմանները հաստատելու մասին>> թիվ 21-Ն որոշմամբ, սույն կանոնակարգով և այլ իրավական ակտերով:

II . ԱՃՈՒՐԴԻ ՆԱԽԱՊԱՏՐԱՍՏՄԱՆ ԵՎ ԱՆՑԿԱՑՄԱՆ ՊԱՅՄԱՆՆԵՐԸ

4. Աճուրդը անցկացնել սակարկությունների ձևով, որի ընթացքում հաղթող ճանաչել այն մասնակցին, որը աճուրդի դրված գույքի համար առաջարկել է առավելագույն բարձր գին:

5. Աճուրդը անցկացնել 2016 թվականի նոյեմբերի 30-ին, ժամը 12^{00}-ին, Հայաստանի Հանրապետության Շիրակի մարզի Ձրառատ գյուղում՝ գյուղապետարանի շենքում:

6. Աճուրդի մասին հրապարակային ծանուցումը հրապարակել նվազագույնը 2000 տպաքանակ ունեցող մամուլում՝ աճուրդի կայացման օրվանից առնվազն 30 օր առաջ:

7. Աճուրդի հրապարակային ծանուցման մասին հայտարարությունը աճուրդի անցկացման վայրում և համայնքի մարդաշատ այլ վայրերում տեղադրել աճուրդի կայացման օրվանից

առնվազն 30 օր առաջ: Աճուրդի մասին հրապարակային ծանուցումը՝ աճուրդի կայացման օրվանից առնվազն մեկ օր առաջ տեղադրվում է աճուրդի կայացման վայրում ցուցատախտակի վրա:

8. Հրապարակային սակարկությունների մասնակից կարող են հանդիսանալ ֆիզիկական և իրավաբանական անձինք, ինչպես նաև համայնքները:

9. Հրապարակային սակարկություններին չեն կարող մասնակցել՝

1/ աճուրդային հանձնաժողովի անդամները /աճուրդի կազմակերպիչ/,

2/ համայնքի ավագանու անդամները,

3/ աճուրդավարի երեխաները, ծնողները, ամուսինը, տատը, պապը, եղբայրները և քույրերը, ինչպես նաև աճուրդավարի ամուսնու ծնողները, տատը, պապը, եղբայրները և քույրերը:

10. Աճուրդի մասնակցության վճարի չափը սահմանված է 2000 /երկու հազար/ դրամ:

11. Աճուրդին կարող են ներկա գտնվել աճուրդի մասնակից չհամարվող այլ անձինք, ովքեր վճարել են մուտքի տոմսի վճարը:

12. Աճուրդի մասնակից չհամարվող անձանց համար մուտքի տոմսի վճարը սահմանվում է 1000 /մեկ հազար/ դրամ:

12. Աճուրդի մասնակիցները և մասնակից չհամարվող անձիք (Դիտորդ), աճուրդի դահլիճում զբաղեցնում են առանձին տեղեր:

13. Աճուրդի մասնակիցները և դիտորդները պարտավոր են չխոչընդոտել աճուրդի անցկացմանը և հետևել հետևյալ կանոններին՝

1) չհայտնել իրենց դժգոհությունը որևէ մասնակցի, մասնակից չհամարվող անձի, աճուրդային հանձնաժողովի կամ աճուրդավարի նկատմամբ,

2) չխոսել աճուրդի ընթացքում, բացառությամբ սույն պայմաններով սահմանված դեպքերի,

3) հարցադրումներ ուղղել աճուրդային հանձնաժողովի նախագահին լոտի աճուրդը սկսվելուց առաջ կամ հետո, իսկ լոտի աճուրդի ընթացքում միայն աճուրդավարի թույլտվությամբ,

4) աճուրդի ընթացքում դուրս չգալ դահլիճից կամ չվերադառնալ դահլիճ՝ բացառությամբ ընդհանուր աճուրդի դեպքում լոտերի աճուրդների միջև ընկած ժամանակահատվածի՝ աճուրդավարի թույտվությամբ,

5) չթաքցնել աճուրդավարի կամ նրա ամուսնու ազգական լինելու հանգամանքը:

14. Աճուրդի դրված գույքի մեկնարկային գները հաստատված են Հայաստանի Հանրապետության Շիրակի մարզի Զրառատի համայնքի ավագանու 2016 թվականի հոկտեմբերի 26-ի <<Հայաստանի Հանրապետության Շիրակի մարզի Զրառատի համայնքի սեփականությունը հանդիսացող թվով 5 անվանում գույքի աճուրդով օտարելու, օտարման մեկնարկային գինն ու պայմանները հաստատելու մասին>> թիվ 21-Ն որոշմամբ:

15. Աճուրդի մասնակցի համար գնային առաջարկի նվազագույն հավելման չափը սահմանվում է մեկնարկային գնի 5 տոկոսի չափով:

16. Աճուրդի նախավճարի չափը սահմանվում է մեկնարկային գնի 5 տոկոսի չափով և նախավճարը վճարելուց հետո աճուրդի մասնակցին տրամադրվում է <<Աճուրդի մասնակցի վկայական>>:

17. Աճուրդի կանխավճարը և մուտքի վճարը վճարվում են աճուրդի կազմակերպչին:

18. Աճուրդում հաղթած է համարվում աճուրդի այն մասնակիցը, ով աճուրդավարի մուրճիկի երրորդ հատվածից հետո ներկայացրել է ամենաբարձր գնային հայտ:

19. Աճուրդի դրված գույքի ուսումնասիրման համար ժամկետ է սահմանվում 2016 թվականի հոկտեմբերի 30-ից մինչև աճուրդի կայացման օրը՝ ժամը 9:00-ից մինչև 15:00-ն Հայաստանի Հանրապետության Շիրակի մարզի Զրառատ գյուղում:

20. Աճուրդի կանոնակարգին ծանոթացումը և լուսապատճեի տրամադրումը կատարվում է Զրառատի գյուղապետարանում՝ 2016 թվականի հոկտեմբերի 30-ից մինչև աճուրդի կայացման օրը՝ ժամը 9^{00}-ից մինչև 15^{00}-ն:

21. Աճուրդը սկսվելուց մեկ ժամ առաջ աճուրդային հանձնաժողովը /աճուրդի կազմակերպիչ/ իր նիստում գրանցում է աճուրդի մասնակիցներին՝ ստուգելով նրանց ինքնությունը, լիազորությունները հաստատող փաստաթղթերը և իր որոշմամբ թույլատրում է մասնակցել աճուրդին:

22. Աճուրդի արդյունքների մասին աճուրդի անցկացնելու օրը կազմվում է արձանագրություն, որն ստորագրում են՝ աճուրդային հանձնաժողովի ներկա անդամները և աճուրդի հաղթող մասնակիցը:

23. Աճուրդում հաղթող ճանաչված մասնակցի հետ արձանագրության ստորագրման պահից նրան են անցնում համապատասխան գույքի վերաբերյալ առք ու վաճառքի մասին պայմանագիր կնքելու իրավունքը:

24. Աճուրդում հաղթող ճանաչված մասնակցի հետ առք ու վաճառքի պայմանագիրը կնքվում և գույքի ամբողջ գնի վճարումը կատարվում է աճուրդի կայացման օրվանից հետո10-օրյա ժամկետում:

25. Աճուրդում հաղթող ճանաչված մասնակցի հետ արձանագրության ստորագրման պահից տասնօրյա ժամկետում կնքվում է առք ու վաճառքի պայանագիր և կատարվում է գույքի ամբողջ գնի վճարումը, հաշվանցելով մուծված նախավճարի գումարը:

26. Սահմանված ժամկետներում առք ու վաճառքի պայանագիրը չկնքելու և /կամ/ գույքի գինը չվճարելու դեպքում վճարված նախավճարը չի վերադարձվում և փոխանցվում է համայնքի բյուջե:

27. Գույքի առք ու վաճառքի նոտարական վավերացման հետ կապված ծախսերը կատարվում են աճուրդում հաղթող ճանաչված մասնակցի կողմից:

28. Աճուրդը կայանալու կամ չկայացած հայտարարվելու պահից մեկ աշխատանքային օրվա ընթացքում աճուրդում չհաղթած մասնակցին վերադարձվում է նախավճարը:

29. Աճուրդի մասնակցության հայտերն ընդունվում են Զրառատի գյուղապետարանում աճուրդային հանձնաժողովի կողմից 2015 թվականի հոկտեմբերի 30-ից մինչև նոյեմբերի 29-ը՝ յուրաքանչյուր աշխատանքային օր, ժամը՝ 10:00-ից մինչև 15:00-ն:

30. Աճուրդին մասնակցել ցանկացողները ներկայացնում են՝

1/ հայտ՝ սահմանված ձևանմուշով,

2/ ֆիզիկական անձանց համար՝ անձնագրի պատճեն,

3/ իրավաբանական անձանց և համայնքների համար՝ ձեռնարկության հիմնադիր փաստաթղթերի պատճեները և ներկայացուցչի լիազորությունը հաստատող փաստաթուղթը,

4/ նախավճարի մուծման անդորրագիրը:

31. Աճուրդային հանձնաժողովը աճուրդի արդյունքների վերաբերյալ կազմված եզրակացությունը մեկ օրվա ընթացքում ներկայացնում է համայնքի ղեկավարին:

32.Աճուրդում վաճառված գույքի նկատմամբ իրավունքները ենթակա են պետական գրանցման:

33. Աճուրդը համարվում է չկայացած եթե.

1) Աճուրդին ներկայացել է միայն մեկ գնորդ կամ չի ներկայացել որևէ գնորդ:

2) աճուրդի ընթացքում վաճառվող գույքի նախնական գնի հավելում չի կատարվել:

3) աճուրդում հաղթած անձը չի մուծել գնման գինը:

34. Աճուրդը հայտարարվում է չկայացած աճուրդային հանձնաժողովի որոշմամբ՝ ոչ ուշ քան նշված հանգամանքները ի հայտ գալու հաջորդ օրը:

35. Աճուրդը չկայանալու կամ անվավեր ճանաչվելու դեպքում կրկնական աճուրդը կազմակերպում և անցկացնում է չկայացած աճուրդից ոչ ուշ քան մեկ ամիս հետո: Կրկնական աճուրդը կազմակերպում և անցկացնում է աճուրդային հանձնաժողովը՝ սույն կանոնակարգի և /կամ/ համայնքի ավագանու որոշմամբ սահմանված կարգով և պայմաններով:

36. Վերոհիշյալ կանոնների խախտմամբ անցկացված աճուրդը շահագրգիռ անձի հայցով դատարանը կարող է ճանաչել անվավեր: Աճուրդն անվավեր ճանաչելը հանգեցնում է դրանում հաղթած անձի հետ կնքված պայմանագրի անվավերության:

37. Աճուրդի մասնակիցների մասին տեղեկությունները հրապարակման ենթակա չեն:

III . ԱՃՈՒՐԴԱՅԻ ՀԱՆՁՆԱԺՈՂՈՎԻ ԱՇԽԱՏԱՆՔՆԵՐԻ ԿԱԶՄԱԿԵՐՊՈՒՄԸ

38. Աճուրդային հանձնաժողովը իր աշխատանքները կազմակերպում է նիստերի միջոցով:

39. Նիստերն իրավազոր են, եթե դրանց մասնակցում է հանձնաժողովի անդամների սահմանված թվի կեսից ավելին:

40. Հանձնաժողովի որոշումներն ընդունվում են, եթե դրանց օգտին քվեարկել է նիստին մասնակցած հանձնաժողովի անդամների կեսից ավելին:

41. Աճուրդավարը հաստատվում է աճուրդային հանձնաժողովի անդամների կազմից՝ աճուրդային հանձնաժողովի որոշմամբ:

42. Աճուրդային հանձնաժողովը դադարեցնում է իր լիազորությունները՝ աճուրդը կայացած ճանաչվելու, աճուրդի կայացման մասին արձանագրությունը ստորագրելու և համայնքի ղեկավարին աճուրդի արդյունքների վերաբերյալ համապատասխան եզրակացություն ներկայացնելուց հետո:

ԶՐԱՌԱՏԻ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ ԱՀԱՐՈՆ ՈՍԿԱՆՅԱՆ

ՀԱՎԵԼՎԱԾ ԹԻՎ 3
Հայաստանի Հանրապետության Շիրակի
մարզի Զրառատի համայնքի ավագանու
2016 թվականի հոկտեմբերի 26-ի թիվ 21-Ն որոշման

ՀՐԱՊԱՐԱԿԱՅԻՆ ՃԱՆՈՒՑՈՒՄ

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՇԻՐԱԿԻ ՄԱՐԶԻ ԶՐԱՌԱՏԻ ՀԱՄԱՅՆՔԻ ՍԵՓԱԿԱՆՈՒԹՅՈՒՆԸ ՀԱՄԱՐՎՈՂ ԱՃՈՒՐԴՈՎ ՕՏԱՐՎՈՂ ԳՈՒՅՔԻ

1. Աճուրդի անցկացման ժամկետը՝ 2016 թվականի նոյեմբերի 30-ին, ժամը 12^{00}-ին:

2.Աճուրդի կազմակերպիչը՝ Հայաստանի Հանրապետության Շիրակի մարզի Զրառատի գյուղապետարան:

3.Աճուրդի կազմակերպման վայրը /հասցեն/ ՝ գյուղ Զրառատ /Զրառատի գյուղապետարանի շենք/:

4.Աճուրդի ձևը և անցկացման կարգը՝ Հրապարակային սակարկությունների ձև, որի ընթացքում հաղթող է ճանաչվում աճուրդի այն մասնակիցը, որը աճուրդի դրված գույքի համար առաջարկել է առավել բարձր գին:

5. Աճուրդի դրված գույքի /լոտի/ նկարագրությունը

հ/հ	Գույքի անվանումը	Գնահատման-եզրակացության ամսաթիվը համարը	Տեխնիկական վիճակի նկարագրությունը	Միավորի քանակը հատ	Մեկնարկային գինը /ՀՀ դրամ/
01	02	03	04	05	06
1	Ծածկի կողավոր սալեր	15.10.2016թ թիվ-121-6	Կոտրված , հիմնական ծածկող մակերևույթը քայքայված , կողավոր հատվածներում նկատվում են ընդլայնական ճաքեր , բացակայող մետաղական ամրաններ , ըստ նպատակային նշանակությամբ հետագա օգտագործման համար ոչ պիտանի ,	1	800
2	Երկաթ-բետոնյա հենասյուներ անկյունային	15.10.2016թ թիվ-121-6	Կոտրված , կողավոր հատվածների վրա բետոնի քայքայված տեղամասերով , երկարության վրա ընդլայնական խոր ճաքեր բետոնի վրա , վերջնամասերում կոտրված և զողմամբ կտրված տեղամասերով , բացակայող մետաղական ամրաններ , ըստ նպատակային նշանակությամբ հետագա օգտագործման համար ոչ պիտանի , պարագծի երակարությունը 7-10 մետր ,	1	21000
3	Բետոնյա պատի սալեր	15.10.2016թ թիվ-121-6	Կոտրված , հիմնական ծածկող մակերևույթը քայքայված , նկատվում են ընդլայնական ճաքեր , բացակայող մետաղական ամրաններ ըստ նպատակային նշնակությամբ հետագա օգտագործման համար ոչ պիտանի	1	500
4	Երկաթ-բետոնյա ռիգելներ	15.10.2016թ թիվ-121-6	Կոտրված մակերևույթը քայքայված , կողավոր հատվածներում նկատվում են ընդլայնական ճաքեր մետաղական ամրաններ հիմնականում բացակայում են ըստ նպատակային նշանակությամբ հետագա օգտագործման համար ոչ պիտանի	1	1200

5	Երկաթ-բետոնյա հիմքի կոճղեր	15.10.2016թ թիվ-121-6	Կողային մակերևույթը քայքայված թասանման կցման հատվածները կոտրված , ըստ նպատակային նշանակությամբ հետագա օգտագործման համար ոչ պիտանի	1	4000

6.Աճուրդի պայմանները

1) Աճուրդին կարող են մասնակցել ֆիզիկական և իրավաբանական անձինք և համայնքները:

2) Աճուրդին մասնակցել ցանկացողները ներկայացնում են՝

ա/հայտ՝ սահմանված ձևանմուշով,

բ/ֆիզիկական անձանց համար՝ անձնագրի պատճեն,

գ/իրավաբանական անձանց և համայնքների համար՝ ձեռնարկության հիմնադիր փաստաթղթերի պատճեները և ներկայացուցչի լիազորությունը հաստատող փաստաթուղթը,

դ/ նախավճարի մուծման անդորրագիրը:

3) Աճուրդի մասնակցության հայտերն ընդունվում են Զրառատի գյուղապետարանում աճուրդային հանձնաժողովի կողմից՝ 2016 թվականի հոկտեմբերի 30-ից մինչև նոյեմբերի 29-ը՝ յուրաքանչյուր աշխատանքային օր, ժամը՝ 10:00-ից մինչև 15:00-ն:

4) Աճուրդի մասնակցի համար գնային առաջարկի նվազագույն չափը սահմանվում է մեկնարկային գնի 5 տոկոսի չափով:

5) Աճուրդի մասնակցության վճարի չափը սահմանված է 2000 /երկու հազար/ դրամ:

6) Աճուրդի մասնակից չհամարվող անձանց համար մուտքի տոմսի վճարը սահմանվում է 1000 /մեկ հազար/ դրամ:

7)Աճուրդում հաղթած է համարվում այն մասնակիցը, ով ներկայացրել է ամենաբարձր գնային հայտը:

8) Աճուրդում հաղթող ճանաչված մասնակցի հետ առք ու վաճառքի պայմանագիրը կնքվում և գույքի ամբողջ գնի վճարումը կատարվում է աճուրդի կայացման օրվանից հետո10-օրյա ժամկետում:

9) Աճուրդի կանոնակարգին ծանոթացումը և լուսապատճեի տրամադրումը կատարվում է Զրառատի գյուղապետարանում՝ 2016 թվականի հոկտեմբերի 30-ից մինչև աճուրդի կայացման օրը՝ ժամը 9^{00}-ից մինչև 15^{00}-ն:

10) Աճուրդի դրված գույքի ուսումնասիրման համար ժամկետներ սահմանվում են 2016 թվականի հոկտեմբերի 30-ից մինչև աճուրդի կայացման օրը՝ ժամը 9^{00}-ից մինչև 15^{00}-ն՝ Զրառատ գյուղում:

11) Աճուրդը կայանալու կամ չկայացած հայտարարվելու պահից մեկ աշխատանքային օրվա ընթացքում աճուրդում չհաղթած մասնակցին վերադարձվում է նախավճարը:

12) Վճարումները կատարվում են Զրառատի գյուղապետարանում՝ աճուրդային հանձնաժողովին:

13) Աճուրդի մանրամասներին ծանոթանալ՝ Զրառատի գյուղապետարանում (հեռախոս՝ /093/ 70-40-77, էլ. հասցե՝ jrarat.shirak@mta.gov.am):

ԶՐԱՌԱՏԻ ՀԱՄԱՅՆՔԻ

ՂԵԿԱՎԱՐ ԱՀԱՐՈՆ ՈՍԿԱՆՅԱՆ